

ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ
ԲՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

43



АППАРАТ МИНИСТЕРСТВА
ОХРАНЫ ПРИРОДЫ И
ПРИРОДНЫХ РЕСУРСОВ

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ԸՆԴԵՐՔԻ ՊԵՏԱԿԱՆ ՏԵՍՉՈՒԹՅՈՒՆ
ГОСУДАРСТВЕННАЯ ИНСПЕКЦИЯ ОХРАНЫ ПРИРОДЫ И НЕДР

(0479) 7-05-44

☒ ք.Ստեփանակերտ, փող. Ա.Առաքելյան 14-գ ☎ ☒ ք. Степанакерт, ул. А.Аракелян 14-г

ՈՐՈՇՈՒՄ N 34

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱՆԱՆՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ք.Ստեփանակերտ

«23» հուլիսի 2019 թ.

Ես՝ Արցախի Հանրապետության բնապահպանության և բնական ռեսուրսների նախարարության աշխատակազմի բնապահպանական և ընդերքի պետական տնտեսության պետի պաշտոնակատար Ռաֆիկ Վլյաթի Մաթևոսյանս, քննելով 2019թ. հուլիսի 22-ին ջրօգտագործման թույլտվության կանոնների խախտման փաստով «Մեգատոն» ՓԲԸ-ի տնօրեն՝ Սուրեն Դավիթի Դոշոյանի նկատմամբ N 27 առ 08.07.2019թ. որոշմամբ հարուցված վարչական գործը, համաձայն նախարարի թիվ 10 Ա առ 07.02.2019թ. հրամանի և տնտեսության պետի N 28 առ 12.06.2019թ. հանձնարարագրի կատարված ստուգումների արդյունքում բնապահպանական օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ իրականացված ստուգումների արդյունքներով կազմված N 34 առ 13.06.2019թ. ստուգման ակտ, ինչպես նաև այլ նյութերը.

Պարզեցի

«Մեգատոն» ՓԲԸ-ի տնօրեն՝ Ս.Դ.Դոշոյանը բացատրություն է տվել, որ նախարարության կողմից թիվ 1.5-5/270 առ 07.02.2019թ. և 1.5-5/1016 առ 13.05.2019թ. ուղարկված գրությունների պահանջները, որ «Եղեգնուտ» ՓՏԷԿ-ի ջրառի կետերում ապահովել ջրաչափական դիտակետով, չի կարողացել տեղադրել տեխնիկական պատճառներից ելնելով ու հետագայում նրան հնարավորություններ ստեղծվեն այդ դեպքում հարցին լուծում կտրվի: Բացի դրանից, ընկերության կողմից նախարարությանը չի ներկայացրել ջրառի ծավալների հաշվառման համար բնապահպանական և բնօգտագործման վճարների վերաբերյալ հաշվետվություն:

Վերոնշյալ նրկու դեպքերով ընկերության կողմից խախտվել է N ԲՈ-238 ջրօգտագործման թույլտվության 13-րդ կետի առաջին և նրկրորդ ենթակետերի պահանջները, այսինքն՝ նրա արարքում առկա են «Վարչական Իրավախախտման վերաբերյալ» ԼՂՀ օրենսգրքի 63²-րդ հոդվածի 2-րդ մասի և 169⁴-րդ հոդվածի հատկանիշներ:

Համաձայն «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ԼՂՀ օրենսգրքի 35 ըդ հոդվածի 2-րդ մասի և 63²-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջների՝

ՈՐՈՇԵՑԻ

1. «Մեգատոն» ՓԲԸ-ի տնօրեն՝ Ս.Դ.Դոշոյանին ենթարկել վարչական պատասխանատվության և նշանակել 200000 (ներկու հարյուր հազար) ՀՀ դրամ գումարով վարչական տուգանք:

Սույն որոշումն ստանալուց հետո, 15 օրվա ընթացքում խախտում թույլ տվող անձը պարտավոր է նշված գումարը փոխանցել Արցախի Հանրապետության պետական բյուջե՝ խումբ 24, ենթախումբ 6 915005240618/52 հաշվարկային հաշվին:

2. Տուգանքի վճարումը հավաստող փաստաթուղթը ներկայացնել Արցախի Հանրապետության բնապահպանության և բնական ռեսուրսների նախարարության աշխատակազմի բնապահպանական և ընդերքի պետական տնտեսություն՝ հետևյալ հասցևով՝ ք. Ստեփանակերտ Ա. Առաքելյանի 14-Գ:

3. ԱՀ Բնապահպանության և բնական ռեսուրսների նախարարին ներկայացնել միջնորդություն «Եղեգնուտ» ՓՀԷԿ-ի ջրօգտագործման թույլտվության գործնական կասեցման վերաբերյալ՝ մինչև N ԲՈ-238 ջրօգտագործման թույլտվության 13-րդ կետի պահանջների ապահովումը:

Արցախի Հանրապետության «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի 287 և 288 հոդվածների համաձայն, սույն որոշումը կարող է բողոքարկվել վերադաս մարմին(վերադաս պաշտոնատար անձին) կամ դատական կարգով՝ որոշումն ընդունելու օրվանից 10 օրվա ընթացքում:



Պետի պաշտոնակատար

Ռ.Վ.Մաթևոսյան